«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի ՀՕ-82-Ն ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-983-09.12.2024-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի հունվարի 24-ի ՀՕ-82-Ն հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ հայտնում է հետևյալը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծերի ընդունման դեպքում մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը և դրանից հետո Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակված (առևտրին թույլատրված) արժեթղթերի (արժեթղթերի դասերի) նկատմամբ, ըստ էության, կիրառվելու են հարկման տարբերակված մոտեցումներ, ինչը կապիտալի շուկայի զարգացման տեսանկյունից ընդունելի չէ, առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում՝

1) «2020 թվականի մարտի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ» բառերը փոխարինել «2020 թվականի մարտի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ» բառերով.

2) «մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ» բառերը փոխարինել «մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ» բառերով:

Վերոգրյալը հնարավորություն կընձեռի մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակված (առևտրին թույլատրված) արժեթղթերի

(արժեթղթերի դասերի) նկատմամբ խնդրո առարկա արտոնությունները նույնպես կիրառելի դարձնել, ինչը կարևորվում է ներդրողների համար կանխատեսելի հարկային միջավայր ձևավորելու առումով:

Միաժամանակ առաջարկում ենք նույն նախագծից հանել նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործող Հարկային օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ պարտատոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից և նման այլ գործարքներից ստացվող եկամուտներն արդեն իսկ ազատված են եկամտային հարկով հարկումից, և առաջարկվող կարգավորման անհրաժեշտությունը բացակայում է: